ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ՝ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հուլիսի 6-ին կնքված ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման պայմանագրում 2016թ-ի հուլիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված աշխատանքները իրականացվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշախատանքների կատարման նպատակով 22.07.2016թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով նախատեսվել են համապատասխան միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 696:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
06.07.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

«22» հուլիսի ---------- 2016թ.

ք. Երևան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Պավլովի մի կողմից, և «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Գ.Բիշարյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 06.07.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 8.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն համաձայնագրի հավելվածով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար սույն համաձայնագրի հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Էջմիածին, Մարգարյանի խճուղի 1/1
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 16311801505 2
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 04715192
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի	«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ի տնօրեն՝
ժամանակավոր պաշտոնակատար՝	
Ա.Պավլով	**Գ.Բիշարյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«06» հուլիսի 2016թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2016 թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը Տարի
1	4251	ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ							111 674 880	111 674 880	111 674 880	111 674 880	111 674 880	111 674 880	111 674 880

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝
Ա.Պավլով
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ
ք. Էջմիածին, Մարգարյանի խճուղի 1/1
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

Հ/Հ 163118015052
ՀՎՀՀ 04715192
«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ի տնօրեն՝
Գ.Բիշարյան
(ստորագրություն)
Կ.Տ